

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #7

Հուլիս 2017

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Սննդի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	6
Շինարարություն .....	8
R&D .....	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	13
Կոսմետիկա.....	14
Դեղագործություն .....	16
Այլ ոլորտներ .....	17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մենդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

***Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդի խորհրդատվության ոլորտում, փնտրում է առևտրային գործակալներ***

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդի խորհրդատվության և ծառայության մեջ, փնտրում է գործընկեր, ով ցանկանում է մուտք գործել ռուսական շուկա և կնքել առևտրային գործակալի համաձայնագիր: Հիմնական ծառայությունները ներառում են՝ սննդի արտադրության ստանդարտների մշակում, սննդի մշակման ինժեներիա սննդի արտադրության և սննդամթերքի սպասարկման ընկերությունների համար, սննդամթերքի անվտանգության ծրագրերի մշակում ըստ Վտանգի վերլուծության և կրիտիկական վերահսկման կետի, ուսուցողական գործունեություն սննդի սպասարկման ընկերությունների ցանկը կազմելու համար:

Ծածկագիր. **BORU20160905003**

***Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ օրգանական բժշկական նշանակության սնկերը  
և սննդային հավելումները շուկայում տարածելու համար***

Մլովենական ընկերությունը, որն արտադրում է բժշկական նշանակության սնկեր և սննդային հավելումներ, փնտրում է ապրանքի տարածման գործակալներ (ինտերնետ-խանութներ, դեղատներ, արդյունաբերական հիմնարկներ) իրենց ապրանքը ընկերության ապրանքանիշով տարածելու համար:

Ծածկագիր. [BOSI20160523001](#)

***Լեհական առողջ և դիետիկ սնունդ արտադրող առաջատար ընկերությունը փնտրում է  
գործակալներ***

Լեհաստանում գործող ամենամեծ և առաջատար ընկերությունը, որը զբաղվում է առողջ և դիետիկ սննդի արտադրությամբ, ցանկանում է ընդլայնել իր ցանցը և փնտրում է օտարերկրա գործընկերներ, ովքեր հետաքրքրված են Եվրոպայում ապրանքների տարածմամբ:

Ծածկագիր. [BOPL20150616005](#)

***Սառեցված ասիական սնունդ արտադրող ընկերությունը փնտրում է գործակալների կամ  
ներմուծողների Եվրոպայում***

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձր որակի ասիական սննդի արտադրության և առևտրականացման մեջ, փնտրում է ներմուծողներ կամ գործակալներ նրանց հետ համաձայնագիր կնքելու նպատակով: Ընկերությունն առաջարկում է սառեցված և պատրաստի սնունդ, ինչպիսիք են՝ զարնանային ռուլեր, ռավիոլի և այլն:

Ծածկագիր. [BOFR20161202004](#)

## **Գործարար համագործակցության հարցումներ**

***Մերբական օրգանական միջին չափերի կլաստերը փնտրում է գործընկերներ համատեղ  
ձեռնարկության և ծառայության պայմանագրեր կնքելու համար:***

Մերբական օրգանական կլաստերը, որը սկսել է իր գործունեությունը Վոյվոդինա քաղաքում, և ունի 50 անդամ, փնտրում է օրգանական գյուղատնտեսական ծրագիր իրականացնող գործընկերներ համատեղ ձեռնարկության պայմանագիր հաստատելու համար (կարող են լինեն օրգանական գյուղատնտեսության ոլորտի համապատասխան ասոցիացիաներ, կազմակերպություններ): Կլաստերին անհրաժեշտ է նաև սեմինարների կազմակերպում, որպեսզի իր անդամներին տեղյակ պահի օրգանական գյուղատնտեսության վերջին զարգացումներին:

Ծածկագիր. [BRRS20151214001](#)

***Ընկերությանն անհրաժեշտ են բնական սննդի մատակարարներ***

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է բնական սննդի վաճառքում, փնտրում է բնական ապրանքներ արտադրող ընկերություններ կամ մատակարարներ, որոնք կարող են ապահովել մեծաքանակ մատակարարում: Ընկերությունն առաջարկում է կնքել ապրանքի տարածման պայմանագիր:

Ծածկագիր. BRRO20170224001

***Պահանջվում են չբոված ընկուզեղենի, չրերի և այլ տեսակի նախուտեստների մատակարարներ***

Սլովենական ՓՄՁ-ն, որը հանդիսանում է բազմատեսակ մթերքների և խմիչքների դիստրիբյուտոր, փնտրում է չբոված ընկուզեղենի, չրերի և այլ տեսակի նախուտեստների մատակարարներ իրենց սեփական ապրանքանիշով նոր ապրանքների արտադրության համար: Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրական համաձայնագիր:

Ծածկագիր. BRSI20170113002

***Ընկերությունը փնտրում է օրգանական սերտիֆիկացված և առողջարար նախուտեստներ արտադրողներ իրենց մասնավոր պիստով՝ իրացնելու և Ֆրանսիայում տարածելու համար***

Ֆրանսիական ընկերությունը, որն արդեն ներգրավված է օրգանական խմիչքների արտադրության մեջ, փնտրում է նոր գործընկերներ, որոնք կարող են լինել օրգանական մթերքների (բանջարեղենային և մրգային չրեր, շոկոլադե և մրագային սալիկներ) արտադրողներ, մանրածախ վաճառողներ կամ գործակալներ (մասնավոր պիստով)՝ Ֆրանսիայում ապրանքը տարածելու նպատակով:

Ծածկագիր. BRFR20170331001



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Արտադրող փնտրում է առևտրի միջնորդներ*

Սերբական ընկերությունը, որը հանդիսանում է տեքստիլ արտադրող, փնտրում է դիստրիբյուտորներ: Տեքստիլ արտադրող ընկերությանը (ծածկոցներ, բարձեր, սրբիչներ, ինչպես նաև ռեստորանների համար նախատեսված տեքստիլ՝ սփռոցներ, անձեռոցիկներ) անհրաժեշտ են առևտրի միջնորդներ:

Ծածկագիր. BORS20161221001

### *Ընկերությանն անհրաժեշտ են ենթապայմանագրային և աութօրսինգային ծառայություններ*

Սակեդոնական տեքստիլ արտադրող ընկերությունը, որը հիմնադրվել է 1997թ.-ին, փնտրում է գործընկերներ՝ ենթապայմանագրային և աութօրսինգային համաձայնագիր կնքելու համար: Ընկերությունն առաջարկում է բարձր որակի արտադրանք, իսկ նվազագույն պատվերների քանակը կազմում է 500 կտոր:

Ծածկագիր. BOMK20161228001

### *Ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները*

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է կանանց, տղամարդկանց և երեխաների, ինչպես նաև տան համար նախատեսված տեքստիլի արտադրության ոլորտում, փնտրում է ընկերություններ, որոնք ցանկանում են բարձր որակի արտադրանք և ամբողջական արտադրական ծառայություններ: Ընկերությունը ունի 25 տարվա փորձ և փորձառու աշխատակազմ: Ընկերությունն առաջարկում է նաև ենթապայմանագրային ծառայություն արտադրողների և դիզայներների համար:

Ծածկագիր. BOBG20170127001

***Լիտվական արտադրողը փնտրում է առևտրի միջնորդներ և առաջարկում է իր արտադրական ծառայությունները այլ ընկերություններին***

Լիտվական ընկերությունը, որն ունի բոլոր իրերի արտադրության (վերմակներ, բարձեր, դոշակներ, հողաթափեր, բուժիչ գոտիներ, հագուստ կանանց և երեխաների համար) 15 տարվա փորձ, փնտրում է առևտրային գործակալներ նրանց հետ տարածման համաձայնագիր կնքելու համար: Ընկերությունն առաջարկում է նաև իր արտադրական ծառայությունները (տան համար նախատեսված տեքստիլի և հագուստի արտադրություն) այլ ընկերություններին՝ նրանց հետ արտադրական պայմանագիր հաստատելու նպատակով:

Ծածկագիր. BOLT20160520001

***Բրիտանական արտադրողը փնտրում է առևտրային գործակալներ***

Բրիտանական ընկերությունը, որն արտադրում է բարձրորակ անկողնային պարագաներ սերտիֆիկացված GOTS-ով (Գլոբալ Օրգանական Տեքստիլի Ստանդարտ), պատրաստված 100 % բամբակից և ոչխարի բրդից, փնտրում է առևտրային գործակալներ, որոնց հետ կարող է պայմանագիր կնքել:

Ծածկագիր. BOUK20170418002

***Ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները որպես ենթակապալառու և արտադրող***

Չեխական ընկերությունն արտադրում է արդյունաբերական տեքստիլ-գործվածքներ պատրաստված կտավատից և բամբակից: Ընկերությունն արտադրում է նաև անհատական պատվերներով հատուկ ջրակայուն և հրակայուն գործվածքներ, որոնք օգտագործվում են որպես բազմաշերտ վրաններ և ծածկոցներ: Ընկերությունը ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու կամ կնքել արտադրական պայմանագիր:

Ծածկագիր. BOCZ20151023001

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Հունգարական հագուստ արտադրող ընկերությունը փնտրում է տեքստիլի մատակարարների  
ԵՄ-ից***

Հունգարական ընկերությունը, որն արտադրում է ֆունկցիոնալ հագուստ, ներքնազգեստ, աշխատանքային և հանգստի համար նախատեսված հագուստ, առաջնորդվում է իր գործունեության մեջ էկոլոգիական սկզբունքներով: Ընկերությունը փնտրում է տեքստիլի դիստրիբյուտորներ գործակալներ կամ արտադրողներ:

**Նոր հիմնված դանիական ՓՄՁ-ն փնտրում է շարժական բամբակյա ծածկոցներ արտադրողներին**

Նորաստեղծ ընկերությունը հիմնված Դանիայում՝ Կոպենհագենում, մշակել է շարժական բամբակյա ծածկոցների նմուշներ և փնտրում է ընկերությունների, որոնք կարող են իրականացնել այդ աշխատանքը՝ կիրառելով օրգանական բամբակ: Ակնկալվում է կնքել արտադրական պայմանագիր:

## Շինարարություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

**Իտալական ընկերությունը ցանկանում է կնքել համատեղ ձեռնարկության, ծառայության մատուցման և առևտրային գործակալության համաձայնագիր**

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է տարբեր տեսակի գեղարվեստական արտեֆակտների (փայտ, կտավ, ճենապակի և այլն) ճարտարապետական վերականգման և պահպանման աշխատանքներում, ինչպես նաև քաղաքացիական և արդյունաբերական շինությունների նախագծման ու տեխնիկական խորհրդատվության ոլորտում, փնտրում է գործընկերներ:



***Բուլղարական ընկերությունը փնտրում է շինարարական ոլորտում գործընկերների***

Բուլղարական ՓՄՁ-ն մշակել է պատերի համար ինովացիոն 3D գիպսե պանելներ: Պանելները կարելի է լինել տարբեր գույների՝ կախված պատվերներից: Ընկերությունը փնտրում է նոր գործընկերներ՝ առևտրային գործակալության պայմանագիր կնքելու և առաջարկում է ենթակապալառուի ծառայություն:

Ծածկագիր. BOBG20170623001

***Բարձր որակի փայտյա տներ և նմանատիպ կառույցներ՝ պատրաստված տաշած փայտից***

Ռումինական ընկերությունը, որն ունի ճարտարագետների և դիզայներների մասնագիտական թիմ և զբաղվում է բարձրորակ փայտյա տների, շոգեբաղնիքների և այլն-ի կառուցմամբ, ցանկանում է հաստատել երկարատև արտադրական կամ ենթակապալառուի պայմանագիր:

Ծածկագիր. BORO20160405001

***Լեհական արտադրողը փնտրում է ապրանքի տարածման և առևտրային գործակալների***

Լեհական ՓՄՁ-ն, որը գտնվում է Լեհաստանի հյուսիս-արևելքում, իր գործունեությունն է ծավալում շուկայում 1985 թ-ից: Ընկերությունն արտադրում է պրեմիում դասի փայտյա դռներ, որոնք ունեն երկարաժամկետ երաշխիք: Ընկերությունը փնտրում է ապրանքի տարածման գործակալների, ներդրողների, մշակողների և ճարտարապետների, որոնք հետաքրքրված են բարձրորակ դռների գնմամբ: Ակնկալվում է կնքել ենթապայմանագրային, տարածման կամ առևտրային համաձայնագիր:

Ծածկագիր. BOPL20170622001

***Ընկերությունն առաջարկում է իր արդյունաբերական տարածքը գործընկերներին՝ համատեղ ձեռնարկության համաձայնագրի շրջանակներում***

Ռուսական ընկերությունը, որը գտնվում է Սվերդլովսկի շրջանում, առաջարկում է իր արտադրական տարածքը արտասահմանյան գործընկերներին, ովքեր հետաքրքրված են համատեղ ձեռնարկության համաձայնագրի շրջանակում համագործակցությամբ:

Ծածկագիր. BORU20170621001

***Կերամիկական իրեր արտադրողը փնտրում է առևտրի միջնորդներ***

Թուրքական ընկերությունը, որը գտնվում է Սամսունում և մասնագիտացած է կերամիկական իրերի արտադրությամբ, փնտրում է առևտրի միջնորդներ եվրոպական քաղաքներում:

Ծածկագիր. BOTR20151214002

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Բրիտանական ՓՄՁ-ն փնտրում է ինֆրակարմիր ջեռուցման վահանակների վերահսկիչներ***

Մեծ Բրիտանիայում հիմնված ՓՄՁ-ն, որը զբաղվում է ինֆրակարմիր ջեռուցման վահանակների արտադրությամբ, փնտրում է դրանց համար նախատեսված վերահսկիչներ՝ իր արտադրանքի մեջ ընդգրկելու նպատակով: Վերահսկողության համակարգը պետք է ապահովի անլար, ճկուն հսկողություն ծրագրի միջոցով: ՓՄՁ-ն ցանկանում է աշխատել այնպիսի ընկերությունների հետ, որոնք ունեն ինֆրակարմիր ջեռուցման վահանակների վերահսկման համակարգ կամ արտադրանք: Նախատեսվում է կնքել լիցենզային պայմանագիր կամ այլընտրանքային փոխհամաձայնության պայմանագիր, ինչպես նաև արտադրական համաձայնագիր:

Ծածկագիր. BRUK20170627001

***Թուրքական ընկերությունն առաջարկում է ապրանքի տարածման ծառայություն ինովացիոն շինարարական նյութեր արտադրող ընկերություններին***

Թուրքական ընկերությունը, որը զբաղվում է շինարարության համար նախատեսված մեկուսացման նյութերի արտադրությամբ առաջարկում է իր ծառայությունները արտադրող ընկերություններին: Ընկերություններ, որոնք ունեն նորարարական շինարարական նյութեր, կարող են կնքել ապրանքի տարածման համաձայնագիր:

Ծածկագիր. BRTR20161024002



***H2020-BBI-IA-DEMO. Նորարարական բիո հավելումներով արտադրանք՝ գյուղատնտեսության մեջ պարարտանյութերի կիրառման կայունությունը ապահովելու համար***

Իսպանական տեխնոլոգիական կենտրոնը, որը զբաղվում է տնտեսական և գյուղատնտեսական թափոնների վերամշակմամբ, փնտրում է կոնսորցիում միասին BBI.D4 2017 (H2020-BBI-JTI) մրցույթին առաջարկ ներկայացնելու համար: Ծրագրի նպատակն է օրգանական թափոններից ստեղծել նոր պարարտանյութեր: Գործընկերներ կարող են լինել գյուղատնտեսական ոլորտի ընկերություններ, որոնք հետաքրքրված են թափոնների մշակմամբ, հետազոտմամբ, ինչպես նաև տեխնոլոգիական կազմակերպություններ, որոնք ունեն փորձ և գիտելիք բիո հիմքով արտադրանքի վերաբերյալ:

Ծածկագիր. RDES20170616001

***Գիտահետազոտական դրամաշնորհի՝ ներդրողներատիվ և հոգեկան խանգարումներ ունեցողների համար դեղեր մշակող դեղագործական ընկերությունների կամ ներդրողներատիվի նոր ռազմավարությունների մշակման մեջ ներգրավված ընկերությունների համար***

Իտալական հետազոտական խումբը մշակել է հարթակ, որտեղ ցուցադրվելու են մոտեցումներ, ներդրողներատիվ և հոգեկան խանգարումների բուժման համար: Նրանք փնտրում են ներդրողներատիվ և հոգեկան խանգարումներ ունեցողների համար դեղեր մշակող դեղագործական ընկերություններ կամ ներդրողներատիվի նոր ռազմավարությունների մշակման մեջ ներգրավված ընկերություններ: Տարածաշրջանային դրամաշնորհը կարող է նպաստել հետազոտության արդյունքների զարգացմանը՝ վճարելով հետազոտական ընկերությունների մեկ տարվա ծախսերը:

Ծածկագիր. RDIT20170529009

***EUROSTARS: Արդյունավետ նոր դեղամիջոց ստույիկի (այերգիկ ռեակցիա) խորքային բուժման համար:***

Հարավկորեական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է նոր դեղամիջոցների և համապատասխան ախտորոշման միջոցների մշակմամբ, ստեղծել է ատոպիայի բուժման դեղամիջոց: Ներկայումս նրանք փնտրում են բժշկական ընկերություններ միասին մշակելու այս ինտեգրված համակարգը՝ EUROSTARS ծրագրի շրջանակում:

Ծածկագիր. RDKR20170427001

***Eurostars2: Փնտրվում են գործընկերներ համագործակցելու ոսկրային համակարգի թուլացման դեմ ողողված սպիտակուցային դեղամիջոցների մշակման համար***

Կորեական ՓՄՁ-ն, որը հանդիսանում է հետազոտական ուղղվածությամբ ձեռնարկություն, փնտրում է համագործակցություն՝ Eurostars2 ծրագրի առաջարկին դիմելու նպատակով: Ծրագրի նպատակն է մշակել սպիտակուցային կամ քիմիական բաղադրիչ պարունակող դեղամիջոց և առողջարար ֆունկցիոնալ սնունդ՝ կանխարգելելու և բուժելու կրծքագեղձի քաղցկեղի հետևանքով աջաջացած ոսկրային մետաստազի ու ոսկրային ոչնչացումը: Ընկերությունը փնտրում է կազմակերպություններ, համալսարաններ կամ գիտահետազոտական ինստիտուտներ, ովքեր մասնագիտացած են կրծքագեղձի քաղցկեղի և սպիտակուցային դեղամիջոցների պատրաստման ոլորտում:

Ծածկագիր. RDKR20170228002

***EUROSTARS2: Մաքրող ռոբոտի, վերահսկման համակարգի և արևային վահանակների նորարարական միասնական համակարգի ստեղծում***

Հարավկորեական ՓՄՁ-ն , որը մասնագիտացած է արևային էլեկտրակայանի և այլ էլեկտրական աշխատանքների մեջ, մշակում է նորարարական արևային էլեկտրակայան, որը ուղեկցվում է մաքրող ռոբոտի, վերահսկման համակարգի առկայությամբ, ինչը բարելավում է արևային էլեկտրակայանի աշխատանքը: Ծրագրի նպատակն է մշակել ինքնակառավարվող մաքրման և վերահսկման ռոբոտ, ինչպես նաև վերահսկման համակարգ՝ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Ներկայումս EUROSTARS ծրագրի շրջանակներում ընկերությունը փնտրում է գործընկերներ, արդեն իսկ ներդրված համակարգի համատեղ մշակման համար:

Ծածկագիր. RDKR20170427004

# Տեղեկատվական տեխնոլոգիաներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *SS ընկերությունն առաջարկում է իր ժամանակակից տեխնոլոգիական ծառայությունները որպես ենթակապալառու*

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է ժամանակակից տեխնոլոգիաների մեջ, առաջարկում է մի շարք ծառայություններ մուլտիմեդիայի ոլորտում: Ընկերությունը առաջարկում է հանդես գալ որպես աութսորսինգ իրականացնող և որպես եթակապալառու այն ընկերությունների համար, որոնք ցանկանում են ձեռք բերել փորձ վիրտուալ իրականության, ընդլայնված իրականության, բջջային հեռախոսների համար խաղերի և հավելվածների մշակման ուղղությամբ: Ընկերությունը ցանկանում է կնքել աութսորսինգային կամ ենթակապալմանագրային համաձայնագիր:

Ծածկագիր. BOPL20170621001

### *Ընկերությանն անհրաժեշտ է ծառայության մատուցման կամ աութսորսինգային պայմանագրեր*

Մեծ Բրիտանիայում նոր հիմնված ընկերությունն առաջարկում է վեբ-դիզայն, գրաֆիկական դիզայնի լուծումներ այն ՓՄՁ-ներին, ովքեր ցանկանում են ընդլայնվել և մուտք գործել նոր շուկաներ: Նրանք ցանկանում են կնքել աութսորսինգային կամ ծառայության մատուցման պայմանագրեր, որոնք կենթադրեն օգնության ցուցաբերում այլ երկրի ընկերություններին, ովքեր ցանկանում են բարձրացնել իրենց տեսանելիությունը Մեծ Բրիտանիայում և ԵՄ-ում:

Ծածկագիր. BOUK20170614001

### *Բջջային հեռախոսների հավելվածներ մշակող լեհական ընկերությունը փնտրում է համագործակցության հնարավորություններ*

Լեհական ընկերությունը, որն արտադրում է բջջային հեռախոսները փնտրող հավելված,

փնտրում է համագործակցության հնարավորություն՝ համատեղ ձեռնարկության շրջանակներում կամ պատրաստ է վաճառել իր բաժնետոմսերը (կնքելով ձեռքբերման պայմանագիր): Ընկերության արտադրանքը հանդիսանում է բջջային հեռախոսի մեջ տեղադրված հավելվածը: Հավելվածը ֆիքսում է ձեր գտնվելու վայրը և ուղարկում կարճ հաղորդագրություն նախօրոք ընտրված անձին կամ անձանց:

Ծածկագիր. BOPL20170215001

## Գործարար համագործակցության հարցումներ

*Ընկերությունը փնտրում է բացառիկ արդյունաբերական S2S (տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիա) արտադրանք տեղական շուկայում տարածելու համար*

Կորեական ինժեներական ծրագրային ապահովման որոլտում գործող ընկերությունը մասնագիտացած է էլեկտրակայանի / էներգիայի համակարգի նախագծման և վերլուծության ոլորտում: Ընկերությունն ապահովել է ավելի քան 140 կորեական ընկերությունների, համալսարանների և կազմակերպությունների համալիր ծրագրային լուծումներով: Ընկերությունը փնտրում է բացառիկ արդյունաբերական S2S (տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիա) արտադրանք՝ կորեական շուկայում տարածելու համար:

Ծածկագիր. BRKR20170705001

## Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

***Արտադրողը փնտրում է գործընկերներ առևտրային կամ արտադրական պայմանագիր կնքելու համար***

Հարավկորեական ընկերությունը՝ հիմնադրված 2012թ., որը զբաղվում է բարձրորակ դեմքի մաշկի խնամքի միջոցների արտադրությամբ, մասնագիտացած է օրգանական և բնական հումքով հարուստ դեմքի դիմակների պատրաստմամբ: Այս ընկերությունն ունի իր սեփական արտադրական գիծը և արտադրանքի մշակման համար նախատեսված հետազոտության ու մշակման կենտրոնը: Արտադրողը ցանականում է ընդարձակել իր արտադրանքը Եվրոպայում և փնտրում է գործընկերներ առևտրային կամ արտադրական պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOKR20170407002

***Նորարարական խտանյութեր անձնական խնամքի և կոսմետոլոգիական արդյունաբերության համար***

Իսրայելում գտնվող ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է խտանյութերի արտադրության մեջ, մշակել է արտոնագրված չլվացվող հեղուկ-խառնուրդ (կրեմներ և լոսյոններ) և լվացվող (շամպուններ, հեղուկ օձառներ) արտադրանք: Արտադրանքի առավելություններն են՝ ծախսերի արդյունավետությունը և արտադրության վերջնական փուլում կոնսերվանտների բացակայությունը, ինչը պահպանում է բոլոր օգտակար բաղադրիչները: Ակնկալվում է կնքել առևտրային և տարածման համաձայնագիր:

Ծածկագիր. BOIL20150812001

***Բուլղարական ընկերությունը փնտրում է գործընկերներ արտասահմանում***

Բուլղարական ընկերությունը, որն ունի 23 տարվա փորձ զբաղվում է բնական յուղերի և ծաղկային ջրերի արտադրությամբ: Արտադրության մեջ օգտագործվող հիմնական եթերային մշակաբույսերն են՝ վարդերը, նարդուրը, երիցուկը և հազարաթերթիկը: Ընկերությունը փնտրում է կոսմետոլոգիական, բժշկական և սննդի ոլորտներից գործընկերներ, նրանց հետ առևտրային պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOBG20170608001

***Ընկերությունը փնտրում է գործընկերներ տարածման և առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո***

Երկար ժամանակ գործող, լիցենզավորված և ճանչում ունեցող ընկերությունը Միացյալ Թագավորությունից, մասնագիտացած է բուժիչ բուսական դեղամիջոցների արտադրության ոլորտում, փնտրում է փորձ ունեցող դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ նոր շուկաներում՝ մեծացնելու համար միջազգային վաճառքի ծավալները:

## Դեղագործություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### *Ընկերությունը փնտրում է առևտրային կամ ապրանքի տարածման գործակալներ*

Մեծ Բրիտանիայում հիմնված ընկերությունը, որը մասնագիտացած է սառեցնող նորարարական արտադրանքի պատրաստմամբ, որը կիրառվում է վիրահատությունների և վնասվածքների, մարզիկների և սպորտով զբաղվող անձանց վնասվածքների վերականգնման համար, փնտրում է ապրանքի տարածման և առևտրային գործակալների առողջապահական, ինչպես նաև սպորտային խանութներում արտադրանքը տարածելու համար:

Ծածկագիր. BOUK20160107005

#### *Ընկերությունը փնտրում է ապրանքի տարածման գործակալներ*

Ֆրանսիական բժշկական ընկերությունը մշակել է նորարարական սարքավորում՝ նախատեսված երակային խնդիրների բուժմանը տան պայմաններում, ինչը թույլ է տալիս նվազեցնել բժշկական ծախսերը և հիվանդներին շնորհել անկախ կարգավիճակ բուժման ընթացքում: Ընկերությունը փնտրում է ապրանքի տարածման գործակալների այս բժշկական սարքավորումը տարածելու համար:

Ծածկագիր. BOFR20160701001

#### *Նորարարական քսուկ դեղագործական կարիքների օգտագործման համար*



Իսրայելում հիմնված ընկերությունը մշակել է նոր քսուկ, որը կարող է օգտագործվել բժշկական նպատակներով որպես դեղագործական միջոց: Արտադրանքի առավելություններն են՝ կոնցերագենների բացակայությունը, մեծաքանակ և փոքրաքանակ փաթեթավորման հնարավորությունը, ինչպես նաև մեծ խնայողականությունը: Ակնկալվում է կնքել ապրանքի տարածման պայմանագիր:

Ծածկագիր. BOIL20160810001

## Գործարար համագործակցության հարցումներ

### *Իսպանական ընկերությունը փնտրում է հիվանդանոցներ և բժշկական հետազոտության կենտրոններ*

Իսպանական ընկերությունը աշխատում է աչքերի շարժումների վերլուծության տեխնոլոգիայի մշակման վրա, որը ուղղված է բազմաթիվ նյարդաբանական և հոգեբանական խանգարումների վաղ ախտորոշման համար: Ծրագիրը իրականացնելու համար, ընկերությունը փնտրում է հիվանդանոցներ և բժշկական հետազոտության կենտրոններ՝ մասնագիտացած նյարդաբանական խանգարումների ոլորտում, ովքեր պատրաստ են իրականացնել բժշկական փորձարկումներ՝ կնքելով ենթակապալառուի պայմանագիր:

Ծածկագիր. BRES20160927001

## Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

***Ընկերությունը ցանկանում է կնքել ենթակապալառուի և արտադրական պայմանագիր***

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է չժանգոտվող և ածխածնային պողպատե բարձորակ իրերի արտադրությամբ, փնտրում է նոր գործընկերներ Եվրոպայում: Ընկերությունը ունի ժամանակակից և ազատ արտադրության հնարավորություն: Արտադրանքի գինը մրցունակ է, իսկ որակը համապատասխանում է եվրոպական ստանդարտներին: Ընկերությունը ցանկանում է կնքել ենթակապալմանագրային կամ արտադրական պայմանագիր:

**Ծածկագիր. BOBG20160121001**

***Լեհական ընկերությունը փնտրում է ապրանքի տարածման գործակալներին***

Լեհական ընկերությունը մասնագիտացած է շինարարական փայտե իրերի արտադրության մեջ և արտադրում է տանիքներ, ճակատային վահանակներ, այգիների համար նախատեսված տաղավարներ, ամառային փոքրիկ քոթեջներ և այլն: Ընկերությունը փնտրում է ապրանքի տարածման գործակալներին:

**Ծածկագիր. BOPL20170607006**

***Վերականգնվող էներգիայի աղբյուրների տեղադրման ժամանակակից սարքավորումների տարածման առաջարկ***

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարական նյութերի և վերականգնվող էներգիայի աղբյուրների տեղադրման ժամանակակից սարքավորումների արտադրությամբ, փնտրում է գործընկեր, ով կտարածի արտադրանքը իր երկրում: Ընկերությունն ունի 25 տարվա փորձ և արտահանում է իր արտադրանքը դեպի Արևմտյան և Արևելյան Եվրոպա: Արտադրանքը համապատասխանում է առաջադեմ տեխնոլոգիական լուծումներին: Ակնկալվում է կնքել առևտրի տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագիր:

**Ծածկագիր. BOPL20170630001**

**Գործարար համագործակցության հարցումներ**

***Ընկերությունը փնտրում է նոր մատակարարներ***

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է լազերային և ջրային կտրող

սարքերի արտադրության ոլորտում, փնտրում է նորարարական նյութերի կամ մետաղական համաձուլվածքներ արտադրողներ, ինչպես նաև գործակալներ՝ նրանցից նոր արտադրական նյութեր ձեռք բերելու համար: Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրական կամ ապրանքի տարածման պայմանագիր:

Ծածկագիր. BRBG20151007001

***Գերմանական ընկերությունը փնտրում է նոր մատակարարներ և առաջարկում է արտադրական պայմանագրեր***

Գերմանական ընկերությունը վաճառում է առցանց հագուստ՝ նախատեսված տղա և աղջիկ երեխաների, ինչպես նաև պատանիների կնունքի, հարսանիքի և այլ միջոցառումների համար: Ընկերությունն առաջարկում է արտադրական պայմանագիր հագուստ արտադրողներին և փնտրում է երեխաների համար որակի և գնի լավ հարաբերակցությամբ տոնական հագուստ մատակարարողներ:


Ծածկագիր. BRDE20170622001

***Ընկերությունը փնտրում է նոր մատակարարներ***

Հունական ընկերությունը, որն արտադրում է ինտերիերի ձևավորման համար նախատեսված գործվածքներ և արքեսուարներ փնտրում է նոր մատակարարների՝ ապրանքի տարածման պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BRGR20170313001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### *Ջրածնային սուլֆիդի և սուլֆիդ ծծմբի հեռացման սարք*

Չեխական համալսարանը մշակել է սարք, որը նախատեսված է ստորերկրա ջրից ջրածնային սուլֆիդի և սուլֆիդ ծծմբի հեռացման համար: Սարքը նախատեսված է տնային տնտեսությունների և փոքր ու միջին բիզնեսների բնական ջրի հոսքի համար: Համալսարանը փնտրում է արդյունաբերական և բիզնես գործընկերներ, ովքեր կարող են արտադրել և տարածել սարքը ու առաջարկում է լիցենզիայի և հետազոտական համագործակցության պայմանագիր:

Ծածկագիր. TOCZ20151102001

### *Հեռախոսային զանգեր կատարելու և տեքստային հաղորդագրություններ ուղարկելու նոր համակարգ և մեթոդ*

Իտալական գիտահետազոտական ինստիտուտը մշակել է նոր համակարգ, որը թույլ է տալիս կատարել անվճար զանգեր և / կամ տեքստային հաղորդագրություններ ցանկացած սարքից, օգտագործելով այլ օգտատերերի (կամրջային սարքեր) հաղորդագրությունները և ռոպեները: Խումբը փնտրում է ընկերություններ, որոնց հետ կարող է կնքել լիցենզիայի համաձայնագիր՝ համակարգի և մեթոդաբանության կիրառման նպատակով:

Ծածկագիր. TOIT20161222002

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

***Բժշկական սարքավորումների մաքրման համար նախատեսված փոքր մեխանիկական սարք***

Իտալիայի հարավում հիմնված ընկերությունը, որը զբաղվում է բժշկական սարքավորումների արտադրությամբ և տարածմամբ, փնտրում է պտտվող ինչպես նաև վեր ու վար շարժումներ իրականացնող սարք: Այս տեխնոլոգիան կներդրվի բժշկական սարքավորումների մաքրման վերահսկման սենսորային էկրանի համակարգում (ինչպես փոքր կատետրները): Համագործակցությունն ակնկալվում է իրականացնել արտադրական համաձայնագիր կնքելով:

Ծածկագիր. TRIT20170120002

***Իսպանական նորարական կենտրոնը փնտրում է SS գործիք՝ բիզնես պլանի մշակման համար***

Իսպանական նորարական կենտրոնը փնտրում է SS գործիք՝ օգնելու ձևավորման վաղ փուլում գտնվող ձեռնարկատերերին մշակելու բիզնես պլան: Գործիքը պետք է պատրաստ լինի ցուցադրման համար: Կենտրոնը ցանկանում է կնքել առևտրային պայմանագիր՝ տեխնիկական աջակցությամբ:

Ծածկագիր. TRES20161009001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

## Սեպտեմբեր

12/09/2017	<b>Matchmaking event "MEET4BUSINESS 2017" at International Trade and Business Fair (Celje, Slovenia)</b>  Այս միջոցառման նպատակն է կազմակերպել 20 րոպեանոց հանդիպումներ՝ բիզնեսների համագործակցության համար: Հանդիպումների համար հիմք է հանդիսանում առցանց կատալոգ, որը պարունակում է յուրաքանչյուր մասնակցի պրոֆիլը: Գործարար համագործակցության այս միջոցառման մեջ ներգրավված ոլորտներն են՝ սարքավորումների, պլաստմասե ծառայությունների, (օդորակման, մեխանիկական և էլեկտրական տեղադրում), տեքստիլի և կաշվի, ինչպես նաև գրաֆիկայի, սննդի և տուրիզմի:
22/09/2017	<b>International Brokerage Event at construction fair FOR ARCH 2017 (Prague, Czech Republic)</b>  Միջոցառմանը հրավիրված են շինարարական ոլորտի կամ դրա հետ կապված ընկերություններ, որոնք ցանկանում են ընդարձակել իրենց բիզնեսը արտասահմանում:
22/09/2017	<b>International B2B meetings for Building and Construction industry at Trade Fair AUTUMN 2017 (Bielsko-Biala, Poland)</b>  B2B հանդիպումները հնարավորություն կտան հանդիպել պոտենցիալ գործընկերների հետ նախապես կազմակերպված 20 րոպեանոց հանդիպումների ընթացքում և ստեղծել իրական համագործակցության հնարավորություններ շինարարական և էներգաարդյունավետության ոլորտում գործող ընկերությունների միջև

**Հոկտեմբեր**

09/10/2017	<b>B2B matchmaking events Contact-Contract 2017 during Engineering Fair (Brno, Czech Republic)</b> Գործընկերների արագ և արդյունավետ որոնում առանց երկարատև նախապատրաստման ու բարձր ծախսերի, հեռանկարային ընկերությունների հետ գրավիչ գործնական հանդիպումների կազմակերպման վստահություն:
18/10/2017	<b>B2Match@Fakuma 2017 - The world of plastics processing (Friedrichshafen, Germany)</b> Այս հարթակը հնարավորություն է ընձեռում ընկերություններին, ինչպես նաև հետազոտական ինստիտուտներին՝ նախապես կազմակերպված երկկողմանի հանդիպումների ընթացքում ձեռք բերել տեխնոլոգիաների փոխանցման գործընկերներ, հետազոտական կամ բիզնես համագործակցություններ:

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

**Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:**